

# ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻ

ՊՐՈԽՈՍԼՈՒ ԵԿԵՂԵՑԻ

Առ. ՅԵՍՏ.

Պրաւոպատները Պրիբալտեան եւկրներում եւ Հայանիայում. — Հաւատակիցների (Եղինօվերգի) ժողովը Մոսկվայում: Օդեսայի թեմի Ա. Ադրէասի եղբայրութիւն. — Պրաւոպատ եկեղեցականները Հելսինգֆօրում: — Կանադայի 500 ունիաների վերադարձ գէպ ի Պրաւոպատ եկեղեցին: — Երեսփոխանների մասնակցութիւնը թեմական ժողովներին. — Հին ծիսական (սարօաքրեադցի) հոգեուրականների արտօնութեան մասին: — Դաւանափոխութեան օրինագիծ:

— Էստլանտիայի 16—17 հազար լատիշ և էստոն պրաւուլաներից 4 հազար հոգուց աւելի լուտերական են դարձել. վարչական հաստատութիւններում 120-ից աւելի խնդիրներ կան լուտերական դառնալու, նատ դէպքում լուտերական են դառնում խմբովին:

Այս հաւատափոխութեան պատճառը ուստ լրագիրը համարում է պրաւոպատ հոգեուրականների սակաւութիւնը Պրիբալտեան նահանգներում:

Պրիբալտեան շրջանում միայն մի եպիսկոպոսական աթոռ կայ այն էլ Ռիգայում. Կուրլանդիայի նահանգը և Էստլանտիան իւր Ռեվել քաղաքով, հեռաւորութեան պատճառով, բոլորովին զուրկ են մնում եպիսկոպոսի անմիջական հսկողութիւնից. քահանաները քիչ են և հեռու են ապրում իրանց ծուխերից և շատ անգամ ծէսերը քահանայի հեռաւորութեան պատճառով՝ տիրացուներն են կատարում։

Ծիսական եկեղեցիները անփառունակ, ծխական դըպւոցները անշուք և խեղճ գրութեան մէջ են. մինչդեռ

լուտերականները ունեն և վերին աստիճանի վայելուչ եկեղեցի և օրինակելի կարգ ու սարքով դպրոց. Դրանց վերայ պէտք է աւելացնել զդաստ և իրանց գործը լաւ հասկացող պաստորները, որոնք առիթը չեն փախցնում «մոլորեալներին» բողոքական եկեղեցու գիրկը հրապուրելու։

Ուսւ լրագրի կարծիքով պէտք է աւելացնել եպիսկոպոսական աթոռները Պրիբալտեան նահանգներում՝ և բազմացնել այն տեղ հոգեոր պաշտօնեաների ու քահանաների թիւը, բարւոքել եկեղեցական կեանքը, եկեղեցիներն ու դպրոցները բարեկարգ ու հրապուրիչ դրութեան մէջ պահելով։

Այս խնդիրը վճռուած է նախապատրաստական ժողովներում։

---

Մոսկվայում տեղի ունեցող հաւատակիցների (եղինօվերցի) ժողովը Ս. Սինօդի հաստատած ծրագրի համեմատ կամենալով իրանց հոգեորականների կրթական վարկը (ցենզը) բարձրացնել, որոշեց ոչ միայն Պետերբուրգի հաւատակիցների դպրոցին երկու աստուածաբանական գասարաններ էլ աւելացնել, այլ ուր հնարաւոր է, ոէտալիան ուսումնարանի նման դպրոցներ բանալ աստուածաբանական գասընթացքով, ժողովը կանոններ է մշակել հաւատակիցների ծխական վարչութեան համար։ Վճռել է հաստատել ծխական խորհուրդներ, որոնք պէտք է վարեն ծխի հոգե որ և տնտեսական գործերը։ Մխական գործերը կարգաւորելու համար հաստատուած է «Մոսկվայի հաւատակիցների ծխական համայնքների միացեալ Խորհուրդ», որի մէջ մտնում են Մոսկվայի հաւատակիցների թեմի բոլոր ծխական համայնքների ներկայացուցիչները։ Այդ «Միացեալ Խորհուրդին» ենթարկվում են թեմին վերաբերեալ բոլոր գործերը, նոյնպէս և այն գործերը, որոնք խորհրդի քննութեանն ու վճռին կառաջարկուեն առանձին ծուխերից։ «Միացեալ Խորհուրդը» յանձն կառնի

պաշտպանել ինչպէս մասնաւոր ծուխերի, նոյնպէս և ածրագի թեմի ստուհարուած իրաւունքներն ու շահերը մը և է ծխի վերաբերեալ գործերը քննելիս խորհուրդը անպատճառ պէտք է հաւաքիրի նոյն ծխի քահանային էլ, որ ձայնի իրաւունք պէտք է ունենայ:

— Ժողովը որոշեց առաջադրել հաւատակիցների բոլոր եկեղեցիներին, որ անթերի կատարեն աստուածալաշտութեան կարգը և պահպանեն հնաւանդ արարողութիւնները և, նկատելով, որ թեմական գպրոցների ընթացաւարտ եկեղ. սպասաւորները անտեղեակ են հին կարգերին ու չեն կարողանում աստուածալաշտութեան կարգը այնպէս կատարել, ինչպէս ցանկանում են հաւատակիցները, որոշ շուեց պարտաւորել քահանաներին, որ խստիւ հոկեն. երդիչները պէտք է երդեն երկիւղածութեամբ, պէտք է թոյլ չը տալ, ու մըապետը ձեռքը կամ' նշան տուող ճիպատը շարժիւ Ցանկութիւն յայտնուեց, որ տիրացուները պարեգոտ (կազա) հագնեն, Կանայք եկեղեցում անպատճառ պէտք է զլուխները ծածկեն թաշկինակով, ոչ մի գէպքում թոյլ չը տալով նրանց գըլխարկ (շիապա) ծածկել. Այս մասին պէտք է աղքարարութիւններ կողնել եկեղեցիների գաւիթներում: Ժողովը որոշեց հրատարակել ամսագիր հաւատակիցների հայեացները պարզաբանելու, և յարձակութիւններին պատասխանելու համար. Ամսագրի հրատարակութեան խնդիրը մանրամասն քննելու համար կաղմուեց առանձին մասնաժողով:

---

Օգեստայի արքեպիսկոպոսի նախաձեռնութեամբ և Սրբ. Արհօգի հաստատութեամբ այն տեղի թեմական Գպրանոցի «Ա. Անդրէաս եկեղեցու եղբայրութիւնը» վերակռչուել է Օգեստայի թեմի Ա. Անդրէասի եղբայրութիւն» ընդարձակելով գործունէութեան շրջանակը:

Եղբայրութեան նպատակն է Խերսոնի թեմում հոգեսրականների ու աշխարհականների միահամուռ գործակցութեամբ,

ա. Միջոցներ ձեռք առնել պահպանել ու տարածել

ժողովրդի մէջ պրաւօնլաւ դաւանութիւնը և զօրացնել բաշրեպաշտութիւնը:

Բ. Մաքառել ամեն տեսակ մոլորութիւնների գէմ, որոնք ազարտում են պրաւօնլաւ եկեղեցու վարդապետութիւնը և ժողովրդին մոլորեցնում են ի վեաս եկեղեցու և պետութեան, նոյնպէս ջանալ, պրաւօնլաւ եկեղեցու գիրկը դարձնել հերետիկոսներին ու այլ ազանդաւորներին:

Այս նպատակով եղբայրութիւնը պէտք է զրքեր հրատարակի, քարոզիչներ կարգի, պրաւօնլաւ եկեղեցու ողուն ու ընդունուած ոճին համեմատ սրբոց պատկերներ տառածի, հետեւի ժողովրդի մէջ երեան եկող ամեն տեսակ կրօնական բարոյական շարժումներին:

— Առք. Եկետ.-ը առնելով Իօվ. Վրեմ.-լրագրից, գրում է, որ պրաւօնլաւ եկեղեցականները Հելսինգֆուուում պարբերական անարգանքի են ենթարկւում յատկապէս բանուորներից, գպրոցական աշակերտներից և կանանցից, Անարգութեան արտայայտութիւններն են թուքը և հայհոյութիւնը, որ ուզուում են դէպ ի եկեղեցականները:

Գեներալ Նահանգապետը դիմել է Ֆինլանդական Անսամբին, որ միջոցներ ձեռք առնի պարտաւորելով հասարակութեանը և դպրոցական աշակերտներին վերջ տալ անկարգութեան և տեղի չը տալ թշնամական կրքերի բորբոքմանը երկրի բնիկների և եկուուների մէջ:

Փողոցային այս վարմունքը մեծ ազմուկ է յարուցել պաշտօնական շրջաններում և հասարակութեան մէջ:

— Սեպտեմբերի 27-ին հեռաւոր Անսագայում մինչ 500 ունիատ գաղթականներ միացել են պրաւօնլաւ եկեղեցուն:

Այս Ունիատ ոռոսինները տասն տարի առաջ գաղթել էին աւստրիական Դալմատիայից, Ուուս քարոզիչները

աշխատում էին այս ունիատներին դէպի իրանց եկեղեցին գրաւել, իսկ եզուխտները ամեն ջանք գործ էին դնում բոլորովին ձուլել հռովմէական եկեղեցու հետ:

Սեպտեմբերի 20-ին երբ հռովմէական եզուխտները հանդիսապէս տօնում էին պրաւօսլաւ եկեղեցու հալածիչ և կաթոլիկութեան պաշտպան Յօվանիան Կունցիչիչի յիշատակը, ունիատների մի խումբ վճռում է միանալ պրաւօսլաւ եկեղեցու հետ և հրաւիրում է կանգայի պրաւօսլաւ միսայի՝ Պլիսաւոր Արտէնի վարդապետին միացման արարողութիւնը հանդիսաւորութեամբ կատարելու, որ և կատարւում է Սեպտեմբերի 27-ին:

Արք. Ախնօդը, ի նկատի ունելով, որ թեմական առաջնորդներից շատերը շահաւէտ են գտնում եկեղեցական երեսփոխանների մասնակցութիւնը թեմական և գործակալութեան ժողովներին, հարկաւոր գտաւ թոյլ տալ երեսփոխաններին, որպէս ծխականների ներկայացուցիչների, ներկայ գտնուել վերև յիշուած ժողովներին, երբ քննուում են եկեղեցու տնտեսական խնդիրները Ռւսուի և որոշում է. ա. յանձնարարել այն առաջնորդներին, որոնք համակիր են երեսփոխանների մասնակցութեանը թեմական բարեկարգչական ժողովներին, առ այս հարկաւոր կարգադրութիւնները անել. բ. յանձնարարել այն առաջնորդներին, որոնք անյարմար էին գտել երեսփոխանների մասնակցութիւնը, բարատրել Ախնօդին անյարմարութեան պատճառները, և ցոյց տալ մասնակցելու հնարաւոր միջոցները:

— Հին ծխականների հոգեորականների արտօնութիւնների մասին խնդիր է յարուցել Մոսկվայի գեներալ նահանգապետը, որին պատասխանել է ներքին գործոց նախարարութեան այլադաւանների գեպարտամենտը թէ,

Հոգեորականների անձնական և ստացուածքի արտօնութեամբ չեն օգտւում, ըստ օրինի, հին ծխականները:

Ըստ օրինի միայն պրաւուլաւ և հայ լուսաւորչական եկեղեցական պաշտօնեաների որդիքը կարող են օգտուել ժառանգական պատուաւոր քաղաքացիութեան իրաւունքով. որովհետեւ այդ արտօնութիւնը յատկացւում է հոգիորականների ժառանգներին, որպէս առանձին դասակարգին Եւ որովհետեւ Հին-ծիսականների հոգեօրականութիւնը ըստ 1905 թ. ապուելի 17-ին հօկտեմբերի 16-ի ուկազների առանձին դասակարգ չեն կազմում, ուստի և պրաւուլաւ և հայ լուսաւորչական եկեղեցական պաշտօնեաների և նրանց որդոց արտօնութիւն տուող օրէնքը չի տարածւում Հին-ծիսական հոգեօրականութեան որդոց վերոյ:

—Մի դաւանութիւնից միւս դաւանութիւն անցնելու օրինագիծը քննելու համար պետական խորհրդում (Ռուս. Սօվ.) նոյեմբերի 19-ին կազմուել է առանձին յանձնաժողով, որի մէջ մտել են պրաւուլաւ հոգեօրականութեան բոլոր ներկայացուցիչները:

### ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ

Կ. Պօլսոյ յոյն պատրիարքի հրաժարականը. Կ. Պօլսոյ յոյն տիեզերական պատրիարք Յովակիմ՝ Գ. սպառհում է հրաժարուել Հրաժարականի պատճառը ներքին է, Սինոդի ցանկութիւնն է, որ Սինոդի անդամ նշանակուին Դատը-Քեօի (Քաղկեդոն), Միտիլիի և Կոլոնիայի մետրապոլիտները, Յովակիմ՝ պատրիարքը չի կամենում, Երկու կողմն էլ անողոք են, և Յովակիմ՝ պատրիարքը յայտնել է, որ նախամեծոր կը համարի Հրաժարուել քանի համաձայնել, որ Աիշեալ մետրապոլիտները անդամ նշանակուին:

Յովակիմ՝ պատրիարքը կամենում է, որ Սինոդի կազմութեան մէջ աշխարհականներն էլ կարծիք ունենան, Եւ խառն ժողովի աշխարհական անդամները պատրիարքի կողմն են.

Յովակիմ պատրիարքը տուել է իւր հրաժարականը. Սիսոդը Յունվարի 2-ին յատուկ պատգամաւորութեան միջոցով խնդրել է, որ պատրիարքը իւր հրաժարականը յետ վերցնի. Սակայն պատրիարքը ասել է, որ Սինօդի անդամների ընտրութեան վերաբերութեամբ մինչև իւր կարծիքը չընդունուի. հրաժարականը յետ չի վերցնի. Սինօդը այս պատասխանը լսելով՝ որոշեց հաստատ մնալ իւր նախկին որոշման վրայ. Նոյնպէս որոշեց, որ Յովակիմ պատրիարքը վարի ընթացիկ գործերը մինչև տեղապահի ընտրութիւնը Յոյն պատրիարքական տագնապի առիթով Բիւզոնադիոնը գրում է.

«Երէկ գրեցինք թէ Օրթոսոքս եկեղեցին մէջ ծանր տագնապ մը ծագած է և կապառնայ ներքին կնճռոստութիւններ պատճառել. Խնդիրն հասկանալու համար պէտք է ակնարկ մը նետել բռնապետական վարչութեան օրով Յունաց պատրիարքարանին ունեցած վիճակին վրայ. 1878-ին Սելանիկի մետրապոլիտ Տ. Եօաքիմ, որ նշանաւոր էր իր գիտութեամբ և խոհեմութեամբ, պատրիարք ընտրուեցաւ և շուտով շահեցաւ մեծ ժողովրդականութիւնն. Սակայն Սինօդը շարունակ գժուարութիւններ յարոյց իրեն դէմ, որովհետեւ միշտ իր ձեռքն հլու գործիք մը նկատած է պատրիարքները. Նոր պատրիարքը վէճի բռնուեցաւ Սինօդին հետ պատրիարքական առանձնաշնորհմանց խնդրայն վրայ. Սկզբամբ ընդունած ըլլալով կառավարութեան մէկ թագրիրը, որուն սաստիկ ընդդիմացաւ Սինօդը, Պատրիարքն սահիպուեցաւ. հրաժարիլ Եօաքիմ երկրորդ անգամ անցաւ պատրիարքական աթոռ 1901-ին. Երբ ինկաւ Դոնսդանդինոս Պատրիարք, Այս ընտրութեան ժամանակ իսկ յայտնի երեեցաւ որ հակառակորդ կորմը միշտ գոյութիւն ունէր, թէի հակառակորդներն առաջին անդամուան չափ չէին. Ժողովուրդն աննկարագրելի ուրախութեամբ ընդունեց Եօաքիմի դարձը. Եօաքիմ Գ. միշտ նշանաւոր հանդիսացաւ իրը խելացի և շրջանկատ եկեղեցական պետ. Զափառու ուղղութեան մը հետեւած է, բայց միշտ հաստատակամութեամբ պաշտպանած է իր գաղափարներն ու

եկեղեցւոյն իրաւուքները կառավարութեան դէմ։ Նոյնպէս  
մեծ պյտիվ պաշտպանած է յոյն եկեղեցիին պատմական  
իրաւունքները Պուլկարներուն դէմ։ Հակառակ իր այս քա-  
զաքականութեան, Եօաքիմ պատրիարք բուռն ընդդիմու-  
թիւններու բաղիւեցաւ միշտ, որք յոյն եկեղեցիէն չեղո-  
ղի մը համար անհասկանալի կմնան. Վերջերս Եօաքիմ  
պատրիարքին դէմ եղած ամբաստանութիւնն այն էր, թէ  
կառավարութեան հակայոյն արարքներուն դէմ պէտք ե-  
ղած կորովը ցոյց չի տար, սակայն կարելի չեղաւ տապա-  
լել զինքը, քանի որ Եօաքիմ Գ. անհուն ժողովրդակա-  
նութիւն կվայելէր։ Տ. Եօաքիմ Պատրիարքը գժուարին  
կացութեան մը մէջ գտնուեցաւ, հետևաբար, մէկ կողմէ  
կառավարութեան, և միւս կողմէ Սինոդին ու ժողովրդեան  
մէկ մասին կողմէ իրեն վրայ արձակուած սլաքներէն։  
Անցեալ տարի նոր վէճ մը ծագեցաւ կառավարութեան  
հետ, որուն հետևանօք Տ. Եօաքիմ Պատրիարքը հրաժա-  
րական տուաւ։ Սակայն կարելի եղաւ համաձայնութիւն  
գոյացնել, և թէև խաղաղութիւն կատարելապէս չհաս-  
տատուեցաւ, այսու հանդերձ խնդրոյն կարգադրման ե-  
ղանակը յաղթանակ մը նկատուեցաւ Պատրիարքին հա-  
մար, թէև Սինոդին ծայրահեղ անդամներն և ժողովրդին  
այն մասն, որ շարունակ քննադատել կոիրէ, ասիկայ նը-  
կատեց շատ աննշան յաղթանակ մը։ Նոր տարւոյն մօտ,  
դարձեալ վէճ մը ծագեցաւ Սինոդին մէջ։ Սինոդը վերա-  
կազմելու խնդիր կար, և սինոդականները կուզէին ան-  
դամակից առնել Տ. Եօաքիմ Պատրիարքին երկու կատա-  
ղի հակառակորդները, Քաղկեդոնի և Միտիլիի մետրա-  
պոլիաները։ Եօաքիմ Գ. ընդդիմացաւ՝ յենով հին օրէն-  
քին, Արիսթինտի, որուն համեմատ Պատրիարքն իրա-  
ւունք ունի ինքն իսկ անուանելու Սինոդին նոր անդամ-  
ները։ Սինոդն ընդհակառակ պնդեց նոր կանոնադրու-  
թեան, Սինդակմագիքոնի վրայ, որով Սինոդն իրա-  
ւունք ունի ինքինք ընտրելու. Պատրիարքն անշուշտ իրա-  
ւունք ունէր ընդդիմանալու իրեն յայտնի հակառակորդ-  
երկու եկեղեցականներու Սինոդի անդամակցութեան, որով

մեծ հարուած մը պիտի ըլլար ի՛ հեղինակութեան, Բայց հակառաքիմեան կուսակցութիւնն ալ կըսէր թէ եկեղեցական կազմակերպութիւնը ժողովրդական հիմանվրայ է, ուրով Արիսդինտի և Սինգակմատդիքոն, երկու սկզբունքներ, իրարու դէմ կելլէին, Պատրիարքը տեսնելով որ չպիտի կրնայ յաղթել ընդդիմադիքներուն, և չուզելով ինքզինքը պարտուած հռչակել, հրաժարեցաւ, Բայց կերեի թէ այս հրաժարումն ապօրէն է, քանի որ հակառակորդ կողմը պատրիարքական հրաժարում ձեռք ձգելու համար պէտք էր իր կողմն ունենար քուէներում<sup>2</sup> թէ, Կալվծիքի այս անհամաձայնութիւնները միշտ՝ երկպառակութիւն յառաջ բերած են յոյն հասարակութեան մէջ, և յոյն տեղական մամուլը շարունակ արձագանք եղած է անոնց Այժմ Պատրիարքին կուսակից են Բրոտոս և Թահիտոսու, իսկ հակառակորդ են Նէոլոզոս և Թարոս։ Պատրիարքին ամենէն մեծ նեցուկն է քաղաքական ժողովը, զոր կկազմեն յոյն հասարակութեան ամենէն ազդեցիկ անդամները, և յոյս կայ, թէ շնորհիւ իրենց ազդեցութան, պիտի կրնան դոհացուցիչ կերպով լուծել խնդիրը։ Սակայն այս խնդիրը ցոյց տուաւ ամենէն անշրջանկատ անձերուն իսկ, թէ ներկայ հանգամանքներուն մէջ Յունաց Պատրիարքին դիրքը շատ անտանելի է։

Յոյն լրագիրները երկու բանակի են բաժանուած, մէկը պաշտպանում է պատրիարքին՝ հակառակորդներին դաւաճան անուանելով, իսկ միւսը՝ յարձակում է պատրիարքի վերայ, նրա վարմունքը բոնապետութիւն կոչելով և այս դրութիւնը դեռ շարունակում է։